հդ. 5112

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՀ ԱՆ «ԱՐՄԱՎԻՐ» ՔԿՀ ՄԱՍՆԱՃԵՆՔԵՐՈՒՄ ՕԴԱՓՈԽՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՏԵՂՎԱԾ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԵՏ ԵՎ ՕԴՈՐԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-22/1

ք.Երևան «25» «04» 2022թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գրիգորյան Շին» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Գևորգ Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 08.12.2021թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.15 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 07.04.2022թ.-ի N436-Ն որոշումն ուժի մեջ մտնելու փաստը, ուժի մեջ է մտել 08.04.2022թ.-ին, կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N3 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.2 Պայմանագրի 1.3 կետի առաջին պարբերությունը հաստատել նոր խմբագրությամբ՝

«1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ»:

1.3 Պայմանագրի N2 հավելվածի՝ «օրացուցային գրաֆիկ»-ի, աշխատանքների կատարման ժամկետը սյունակի բոլոր տողերում գրված թվերը փոխարինել հետևյալ արտահայտությամբ՝ «Մինչև 2022թ.-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ»:

1.4 Պայմանագրի 5.1.1 կետի առաջին նախադասությունը հաստատել հետևյալ խմբագրությամբ՝

«5.1.1 Պայմանագրի գնից՝ 244.500.000 (երկու հարյուր քառասունչորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար»:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված են 3 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011039790
ԳՀՀ 02204739
ՔԿ ծառայություն
Ա.Ղազարյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի
Մուշական 8 փողոց, տուն 92
«ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 22325000323100
ՀՎՀՀ 00481595

Տնօրեն՝
Գ.Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
«25» «04» 2022 թ. կնքված N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՇՁԲ-22/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝				
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ	Ընդամենը
1	45261159/502	ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ մասնաշենքերում օդափոխության, համատեղված ջեռուցման հետ և օդորակման համակարգի կառուցման շինարարական աշխատանքներ	-	400.000.000	750.000.000	978.000.000	978.000.000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011039790
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության
Ա.Ղազարյան

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԳՐԻԳՈՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի
Մուշական 8 փողոց, տուն 92
«ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 22325000323100
ՀՎՀՀ 00481595

Տնօրեն՝
Գ.Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ